Պարույր Սևակ

Երգ եռաձայն

ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ

Ախ, իմ հայրենի՛ք...
Իմ ամբողջ կյանքում լեզուդ եմ սերտում
Եվ չեմ սովորել անսխալ խոսել,
Անսխալ խոսել քո մասին քեզ հետ.
Շփոթվում եմ միշտ անանց հուզմունքից...
Երբ վաղ գարնանը կկուդ է կվվում,
Ինձ ամեն անգամ այնպես է թվում,
Թե թարգմանում է իր թվատ լեզվով
Շնորհավորման իմ խոսքը կակազ.
Նա քո գարունն է շնորհավորում
Եվ ի՛մ փոխարեն...
Քո ամառային ստվերներն անգամ
Իրենց լռությամբ ինձ են թարգմանում՝
Երգելով հիմնը արևիդ լույսի.
Ելևէջում են յուրահատկորեն՝
Երկարանալով ու կարճանալով
Սև բոցերի պես:
Աշնան կաթուկը այգիներիդ մեջ
Բերք ու բարիքիդ օրհներգումն է իմ՝
Համաշխարհային - մատչելի լեզվով...

Եվ նույնիսկ այնժամ,
Երբ խոսում եմ ես քո մասին քեզ հետ,
Մինչևի՛սկ այնժամ
Այլ բան չեմ անում,
Քան թե խոսքերով չափում եմ միայն իմ լռությո՛ւնը,
Որպեսզի կրկի՛ն հասկանամ ցավո՛վ,
Թե այդ լռության համեմատությամբ
Խոսքերն այդ որքա՛ն փոքր են ու չնչին...
Ա՛խ, իմ հայրենի՛ք...
Դու՝
Հազարամյա իմ ազգանո՛ւնը,
Ես -
այնպե՛ս ապրել կարողանայի,
Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար
Դու երբևիցե անհարմար չզգաս...
Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է:
Ա՛խ, երանի՛ թե ես այնպե՛ս մեռնեմ,
Որ դու... ինձ սգաս:
ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ
Ա՛խ, իմ հայրենի՛ք...
Ես ոչի՛նչ, ոչի՛նչ քեզ տալ չեմ կարող.
Ինչ էլ տամ՝ կրկին տվածդ եմ տալիս:
Մինչևիսկ չունեմ պարտքի զգացում.
Ես ոտից-գլո՛ւխ քո պարտքն եմ որ կամ:
Հավաստիացման խոսք նա է ասում,
Ով ուզում է, որ հավատան իրեն:
Իսկ ես միտք չունեմ հավատացնելու.
Ես հավատն եմ քո,
Քայլո՛ղ հավատը...
Ա՛խ, իմ հայրենի՛ք...

Ինձ կոչ են անում կյանքդ ճանաչել,-
Ավելո՛ղդ ձգտում.
Ես մասն եմ կյանքիդ:
Ես քո մամուռն եմ՝
Հինավուրց ու նոր քո կամուրջների քարերի վրա,
Քո աղբյուրների գուռերի կողին:
Եվ քո մրմուռն եմ,
Որ չի թարգմանվում ուրիշ մի լեզվի...
Ծուխն եմ երեկվա քո երդիկների
Եվ քո այսօրվա ծխնելույզների ծուխն եմ միմիայն՝
Քո թեժ կրակից թերևրս անմաս,
Բայց ծնված այդ նույն կրակից քո թեժ:
Քո ծուխն եմ միայն,
Եվ մթնոլորտին քո շունչն եմ խառնում՝
Այդ ծխի տեսքով:
Քո ծուխն եմ միայն.
Խոսել չեմ կարող,
Բայց նկարում եմ կենդանությունը՝
Երկնի կտավին...
Քո հավերժական ու մշտափոփոխ բնանկարի
Երանգներից եմ այնպե՛ս ներկոտված,
Ինչպես երկինքը՝ արևմտոցին:
Ձեռքիդ հետքերից դաջված եմ այնպե՛ս,
Ինչպես գիշերվա երկինքդ՝ աստղերով...
Ա՛խ, իմ հայրենի՛ք...
Ես կյանքիդ համար կյանքս չեմ տվել՝
Ես չեմ մասնակցել և ո՛չ մի մարտիդ,
Բայց կես քայլ անգամ չեմ արել կյանքում,
Որ քեզ չբերի.
Քեզնից սկսվում ու քեզ եմ հանգում՝

Շրջագծի պես...
Վերևից ցած են ջրերդ հոսում,
Իսկ ես իմ ցածից
Լուռ մագլցում եմ դեպի բարձունքդ՝
Քո շոգի՝ նման...
Ու երբ գարունդ է նորից կրկնվում
Մի հրաշալի էպիգոնությամբ,
Չոր ցողունիդ պես ծաղկում է իմ մեջ
Նույն միտքը միայն.
-Թեկուզ անանուն՝
Ինչպես խոտերդ սարերիդ լանջին,
Եթե ես օգնեմ կանաչությանդ,
Կարող եմ ասել.
«Ե՞ս էլ ապրեցի»...

ԵՐԲՈՐԴ ՁԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՞ք...
Ես խոսքեր ունեմ քեզ համար պահված,
Որ չի գտնելու ո՛չ մեկն աշխարհում,
Եվ որ առայժմ ինքս էլ չեմ գտել:
Խոսքերն այդ իմ մեջ և՛ կան, և՛ չկան՝
Ստորերկրյա քո ջրերի պես:
Կարող են այրվել, նաև այրում են՝
Ինչպես խաղողիդ անխառն օղին:
Մոտիկ են նրանք, բայց նաև անհաս,
Ինչպես այն լեռը,
Որ գերբդ է դարձել...

03.I.1960թ.
Թիֆլիս